Արձանագրություն N 4
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 հունվարի 2020թ
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սարգիս Ստեփանյան
անդամներ՝ Աշոտ Քթոյան, Էրիկ Համբարձումյան,
քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

1. N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1 գնման ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով պայմանագրի նախագծի սահմանված ճամկետում չկնքման վերաբերյալ

(Սարգիս Ստեփանյան)

1.1 **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1** ծածկագրով գնման ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված **<Փեյփր Հաուս> ՍՊԸ**-ին 09.01.2020թ.-ին հրավերով սահմանված կարգով համակարգով ծանուցվել է կնքվող պայմանագրի ապահովումը, պայմանագրի նախագիծը և որակավորման ապահովումը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ստորագրել և ներկայացնել Պատվիրատուին և վերջնաժամկետ սահմանվել 23.01.2020թ. ժամը 18:00-ն: Նշված ժամկետում <Փեյփր Հաուս> ՍՊԸ-ն չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկը, ուստի՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ <<Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից>>, **<Փեյփր Հաուս> ՍՊԸ-ն զրկվում է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից:**

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ **<Փեյփր Հաուս> ՍՊԸ-ի/ՀՎՀՀ՝ 00210346/** տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա/ և բ/ մասերով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1 գնման ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով գնման հայտերը վերագնահատելու և գործընթացը շարունակելու մասին

(Սարգիս Ստեփանյան)

2.1 **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1 գնման ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով** վերագնահատել հայտերը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան և **33-րդ չափաբաժնի մասով** ընտրված մասնակից հայտարարել **<ՍԴԴ գրուպ> ՍՊԸ**-ին:

2.2 **33-րդ չափաբաժնի մասով** հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման

մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

2.4 Քարտուղարին՝ սահմանված կարգով բոլոր մասնակիցներին ծանուցել սույն արձանագրության պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս.Ստեփանյան

անդամներ՝ _____ Ա. Քթոյան

_____ Է. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Ս.Պետրոսյան